

Թվանշանների առանձնացում

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Սամվելը դպրոցում շատ լավ էր սովորում: Նրա մաթեմատիկայի ուսուցիչը չէր սիրում, որ հանձնարարված խնդիրները շուտ լուծած աշակերտները ձանձրանում էին իր դասերի ժամանակ: Դրա համար նա լրացուցիչ հետաքրքրաշարժ խնդիրներ էր պատրաստում այդ աշակերտներին տալու համար: Մի անգամ, դասարանական գրավոր աշխատանքը շուտ ավարտելուց հետո, Սամվելը ուսուցչից ստացավ հետևյալ խնդիրը. Տրված են երկու բնական թվեր՝ a և b : Անհրաժեշտ է a թվի թվանշանների արանքում տեղադրել ճիշտ երկու հատ '+' նշան այնպես, որ ստացված արտահայտության արժեքը հավասար լինի b -ի: Սամվելին շատ հետաքրքրեց այդ խնդիրը և նա որոշեց ծրագիր գրել, որը կամայական a և b թվերի համար պարզում է բոլոր հնարավոր այդպիսի տեղադրումները: Հիմա Սամվելն ինքն արդեն ուսուցիչ է, բայց դասավանդում է ինֆորմատիկա առարկան: Նա ձեզ հանձնարարել է գրել այդպիսի ծրագիր:

Մուտքային տվյալներ

Մուտքի միակ տողում տրված է երկու բնական թիվ՝ a -ն և b -ն: a -ն չի պարունակում 0 թվանշանը ($0 < a, b < 10^9$): Մուտքի տվյալներն այնպիսին են, որ գոնե մեկ լուծում կա:

Ելքային տվյալներ

Անհրաժեշտ է արտածել a -ի թվանշանների մեջ ճիշտ երկու հատ '+' տեղադրելու բոլոր հնարավոր տարբերակները, որոնց դեպքում ստացված գումարի արժեքը հավասար է b -ի: Ամեն տարբերակ հարկավոր է արտածել նոր տողում: Տարբերակների արտածման հերթականությունը կարևոր չէ:

Օրինակ

Մուտք	Ելք
12479 68	12+47+9
8845 97	8+84+5 88+4+5

Բացատրություն

Դիտարկենք առաջին օրինակը՝ 12479 թվի մեջ 2 հատ '+' տեղադրելու բոլոր հնարավոր տարբերակներն են. $1+2+479 = 482 \neq 68$ $1+24+79 = 104 \neq 68$ $1+247+9 = 257 \neq 68$
 $12+4+79 = 95 \neq 68$ **$12+47+9 = 68$** $124+7+9 = 140 \neq 68$ Երկրորդ օրինակում տեղադրման միայն մի տարբերակ է հնարավոր՝ $1+8+6$, սակայն այդ դեպքում արտահայտության արժեքը հավասար է 15 - ի: